ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի
Բաժնետերերի ժողովի կողմից
«05» մայիսի 2025
«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝
Անահիտ Շաքարյան

(ստորագրություն)

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատժամիջոցների համապատասխանության

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
2025թ
ԵՐԵՎԱՆ

Բովանդակություն

ՆՊԱՏԱԿԸ 3

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 4
3. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿ 5
4. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 7
5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍՔՐԻՆԻՆԳ 8
6. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 8
7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 8
8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9

ՆՊԱՏԱԿԸ

«Պատժամիջոցներիների համապատասխանության քաղաքականության» (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է համապատասխանեցնել «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից իրականացվող գործառնությունները միջազգային պատժամիջոցների պահպանման պահանջներին, սահմանել Ընկերության կողմից այդ նպատակով կիրառվող սկզբունքները և հսկողական միջոցառումները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Քաղաքականության դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, ղեկավարների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների վրա:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» քաղաքականություն
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ընթացակարգ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային պատժամիջոցներ՝ քաղաքական և տնտեսական որոշումներ, որոնք կիրառվում են երկրների, թիրախային ոլորտների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ՝ ազգային անվտանգության կամ միջազգային իրավունքը կամ դրանց սպառնացող վտանգներից պաշտպանելու նպատակով:
Պատժամիջոցների փաթեթներ՝ տնտեսական կամ ֆինանսական պատժամիջոցների մասին օրենքներ և/կամ կանոններ, առևտրային էմբարգոներ, սահմանափակող միջոցներ, որոշումներ, գործադիր հրամաններ կամ լիազոր մարմինների ծանուցումներ, որոնք կայացվել, կառավարվել, ուժի մեջ են մտել և/կամ կիրարկվել պատժամիջոցներ կիրառող մարմնի կողմից:
OFAC՝ Office of Foreign Assets Control (Արտասահմանյան ակտիվների վերահսկման գրասենյակ):
ՄԱԿ ԱԽ՝ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ:
ԵՄ՝ Եվրոմիություն:
BIS (Bureau of Industry and Security)՝ Ամերիկյան առևտրի պալատի արդյունաբերության և անվտանգության բյուրո:
Պատժամիջոցների ցանկեր՝ միջազգային կառույցների՝ ՄԱԿ ԱԽ, OFAC, Եվրամիություն, ՀՀ ԿԲ և այլ կառույցների կողմից ընդունված և հրապարակված ցանկեր:
Ներքին դիտարկումների մարմին՝ ՆԴՄ, Օրենքով և Լիազոր մարմնի իրավական ակտերով վերապահված գործառույթների շրջանակներում իրականացնում է Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների համապատասխանության հարցերով որոշումներ կայացնելու գործողություններ կատարելու գործառույթները:
Սպասարկող աշխատակից՝ Ընկերության առաջնային օաղակի աշխատակից, որն իրականացնում է հաճախորդի նույնականացումը և սպասարկումը:
Գործարար հարաբերություն՝ Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:
Հաճախորդ՝ Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ, ինչպես նաև այն անձը, որը Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է գործարք:

KYC՝ Ճանաչիր հաճախորդիդ սկզբունք՝ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք, որը ենթադրում է հաճախորդի նույնականացման և ինքնության տվյալների հավաքագրման, հաճախորդի գործարար բնութագրի պարզաբանման, վերջինիս վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների պարբերաբար թարմացման պահանջ և կիրառվում է հաճախորդի ու նրա կողմից կատարված գործարքների պատշաճ ուսումնասիրության իրականացման համար:
Իրական շահառու՝ ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Օտարերկրյա պետությունների կամ միջազգային կառուցների կողմից կիրառվող տարբեր իրավական պարտավորություններից զատ, ցանկացած տեսակի բրոքերային գործարքի դեպքում պատժամիջոցների պահանջների համապատասխանությունը առաջնային կարևորության խնդիր է: Սույն Քաղաքականությունը սահմանում է այն սկզբունքները և ստանդարտները, որոնք նախատեսված են.

1.1.1 շեշտադրել Ընկերության զրոյական հանդուրժողականությունը միջազգային պատժամիջոցների պահանջների խախտման նկատմամբ,

1.1.2 սահմանել արդյունավետ հսկողական համակարգ՝ այդ թվում պատժամիջոցների համապատասխանության ծրագիր,

1.1.3 ապահովել պատժամիջոցների վերաբերյալ համապատասխանության մշակույթի պատշաճ և համարժեք տարածում, որն արտացոլվում է անձնակազմի ուսուցման, և վերապատրաստման ծրագրերում:

1.2. Սույն Քաղաքականությունը մշակված է ՀՀ, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ պետությունների, միջազգային պատժամիջոցներ սահմանող կառույցների, տնտեսական միությունների երկրների օրենսդրության, Ընկերության գործընկերների կողմից առաջ բերված կովենանտների և դրանց հիման վրա ընդունված միջազգային պատժամիջոցների համապատասխանության պահպանմանը առնչվող իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1.3. Սույն Քաղաքականությամբ սահմանվող գործընթացի մաս կազմող առանձին գործառույթները/քայլերը Ընկերության առանձին ստորաբաժանումներում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն են կրում Ընկերության տվյալ ստորաբաժանումների ղեկավարները:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

2.1. Ընկերությունը հետևում և պահպանում է այնպիսի միջազգային խոշոր կառույցների կողմից կիրառվող պատժամիջոցները և ապրանքների արտահանման վրա կիրառվող արգելքները, ինչպիսիք են ՄԹ-ի, OFAC-ի, ՄԱԿ ԱԽ-ի, ԵՄ-ի հիրապարակվողները: Նշված պատժամիջոցները բաժանվում են հետևյալ խմբերի՝

1) պատժամիջոցների համապարփակ ծրագրեր, որոնք կիրառվում են երկրների նկատմամբ: (օր. OFAC-ի կողմից կիրառվող պատժամիջոցները Իրանի, Սիրիայի, Հյուսիսային Կորեայի նկատմամբ):

2) SDN (Specially Designated Nationals) ցանկեր՝ հատուկ թիրախավորված պատժամիջոցների ծրագրեր, որոնք կիրառվում են կոնկրետ անձանց, գործունեության ոլորտների, երկակի օգտագործման ապրանքների, առևտրային/ֆինանսական գործառնությունների հետ կապված

որոշակի գործունեության տեսակների նկատմամբ (օր. որոշ երկրների նկատմամբ ԵՄ կողմից կիրառվող պատժամիջոցները խոցելի ապրանքների, էներգետիկ և միջուկային ոլորտի համար նախատեսված սարքավորումների, սպառազինության և հարակից նյութերի արտահանման համար):

3) Non-SDN (Non-Specially Designated Nationals) ցանկը ներառում է այն անձանց և կազմակերպություններին, որոնք չեն դասվում OFAC-ի կողմից հրապարակված Specially Designated Nationals (SDN)՝ հատուկ նշանակված անձանց ցանկում, բայց որոնց նկատմամբ կիրառվում են որոշակի սահմանափակումներ, օր. Sectoral Sanctions Identifications List (SSI List)-ում ներառված են իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, որոնց նկատմամբ կիրառվում են ոլորտային պատժամիջոցներ (օրինակ՝ ռուսական ֆինանսական ու էներգետիկ ընկերությունները): Հիմնականում արգելվում է նշված ցանկում ներգրավված անձանց կողմից ներդրումների իրականացումն ու ֆինանսավորումը, որոշակի գործարքներում մասնակցությունը, SSI ցանկում ընդգրկված ռուսական բանկերի պարտատոմսեր գնելը որոշ ժամկետներից հետո և այլն:

4) BIS-ի կողմից հրապարակվող արտահանման վարչարարության կարգավորումներ, որոնք սահմանում են ամերիկյան ծագում ունեցող և ԱՄՆ-ից կամ այլ երկրից երրորդ երկրներ արտահանվող կամ վերաարտահանվող արգելված ապրանքների ցանկը, ինչպես նաև որոշակի ապրանքատեսակների (հիմնականում հումանիտար օգնության) արտահանման համար տրամադրվող գլխավոր լիցենզիաները:

2.2. Ընկերության Ներքին դիտարկումների մարմինը վերլուծում է և գնահատում է իր գործարար բնութագրին ներհատուկ պատժամիջոցների ռիսկերը՝ դրանց զսպման ուղղությամբ մեխանիզմներ մշակելու մասով, մասնավորապես՝

1) Հաճախորդների բազան ուսումնասիրվում է ռեզիդենտության և բնակության երկրների կամ աշխարհագրական տարածքների կառուցվածքի տեսանկյունից՝ ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և դեպքերում: ՆԴՄ կողմից հիմնավոր և պատշաճ KYC սկզբունքների կիրառումը հաճախորդների բազայի պարբերական ստուգման հետ համատեղ հնարավորություն է տալիս նույնականացնել և բացահայտել այն հաճախորդներին, որոնց նկատմամբ կիրառվել են պատժամիջոցներ:

2) Նախքան նոր պրոդուկտների/ծառայությունների գործարկումը ՆԴՄ կողմից վերծանվում են այն պրոդուկտներն ու ծառայությունները, որոնց դեպքում դժվար է բացահայտել հաճախորդների կապը սանկցիոն կամ SDN ցանկերում ներառված անձանց հետ:

3) Ընկերության մարքեթինգային ռազմավարությունը մշակվում է այնպես, որպեսզի չթիրախավորվեն պատժամիջոցների ենթարկված երկրների հետ առնչվող կամ այդ երկրների հետ որոշակի գործունեություն ծավալող հաճախորդները, ինչը կարող է հանգեցնել պատժամիջոցների խախտման, շրջանցման և համբավի ռիսկի առաջացման:

2.3. Ընկերությունում կիրառվող այն քաղաքականություններն ու ընթացակարգերը, որոնք որևէ կերպ առնչվում են պատժամիջոցների պահանջների համապատասխանությանը, ենթակա են ՆԴՄ հետ պարտադիր համաձայնեցման, տվյալ ոլորտին բնորոշ ռիսկերը բացահայտելու և դրանց նկատմամբ հսկողական մեխանիզմները ներդնելու նպատակով՝ Ընկերության ռիսկի ախորժակին հատուկ մնացորդային ռիսկի հասնելու համար:

2.4. Ընկերությունը ուսումնասիրում և գնահատում է իր մատակարարների հետ կնքվող գործարքները, ինչպես նաև Ընկերության կողմից իրականացվող նվիրատվությունների կամ հովանավորչական ծրագրերի շահառուներին՝ պատժամիջոցների փաթեթների համապատասխանության տեսանկյունից: Այդ նպատակով համապատասխան գործարքը նախաձեռնող ստորաբաժանումները նախքան գործարքի կնքումը ՆԴՄ-ի հետ համաձայնեցնում են համապատասխան գործարքը և մատակարարին:

3. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿ

3.1. Ընկերությունը շարունակաբար գնահատում է իր խոցելիությունը, հանդուրժողականությունը և ախորժակը պատժամիջոցների ռիսկի նկատմամբ: Հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը՝ մասնավորապես, հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանային անցակետ ունենալու հանգամանքը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հետ նույն տնտեսական գոտում լինելն ու սերտ առևտրային հարաբերություններ ունենալը՝ ծնում է պատժամիջոցների շրջանցման ռիսկեր, Ընկերությունը շեշտադրում է իր զրոյական հանդուրժողականությունը պատժամիջոցների խախտման նկատմամբ և ռիսկի ախորժակի շրջանակներում (սահմանված է Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆիանանսավորման դեմ պայքարի» քաղաքականությանը կից Հավելվածով) մերժում է

1) OFAC-ի, ՄԹ-ի, ՄԱԿ ԱԽ-ի, ԵՄ-ի կողմից հրապարակվող պատժամիջոցների ցանկերում առկա ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ իրականացվող գործարքը կամ գործարար հարաբերության հաստատումը: Այս դրույթը տարածվում է նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց 50% և ավել բաժնեմաս ունեցող մասնակիցը կամ իրական շահառուն ցուցակված է վերոնշյալ ցանկերում:

2) Հանրամատչելի հավաստի աղբյուրներում և լայնորեն կիրառվող տեղեկատվական շտեմարաններում (Polixis, Worldcheck, Accuity և այլն) որպես «պատժամիջոցների հետ ասոցացվող անձ» բնութագրվող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ գործարար հարաբերության հաստատումն ու գործարքի իրականացումը, այդ թվում՝

- այն անձանց, ովքեր ուղղակի կապ ունեն պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների հետ, օրինակ՝ ցանկերում ներառված անձանց ընտանիքի անդամներ, այդ թվում՝ կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, իրավաբանական անձանց դեպքում՝ սեփականատերեր, իրական շահառու, իրավաբանական անձի կառուցվածքում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք[1]

3) գործարքի իրականացումը, եթե գործարքում ներգրավված երկրների կամ տարածքների, ապրանքատեսակների և (կամ) գործունեության ոլորտների հանդեպ կիրառված են պատժամիջոցներ:

4) BIS-ի կողմից արգելված ԱՄՆ ծագում ունեցող ապրանքների արտահանման կամ վերաարտահանման համար իրականացվող գործարքները դեպի Ռուսաստան և Բելառուս՝ համաձայն տվյալ պահին գործող արտահանման վարչարարության կարգավորումների:

5) ցանկացած արժեթուղթ/պարտատոմս թողարկող անձի հետ գործարքի իրականացումը, եթե սքրինինգի արդյունքում առկա կլինի դրական համընկնում պատժամիջոցների ցանկերի հետ:

6) Ընկերությունը բլոկավորում է հաճախորդի բրոքերային հաշվին առկա ողջ միջոցները և պահառության տակ գտնվող արժեթղթերը, եթե տվյալ հաճախորդը ցուցակվում է պատժամիջոցների ցանկերում: Բլոկավորումն իրականացվում է անմիջապես՝ առանց վերջինիս ծանուցելու այդ մասին, Ֆինանսական դիտարկումներ կենտրոնին ներկայացվում է կասկածելի գործարքի մասին հաշվետվություն, եթե համընկնությունն առկա է ՄԱԿ-ի ԱԽ ցանկերի հետ և քայլեր են ձեռնարկվում նշված հաճախորդի հետ գործարար հարաբերությունը խզելու ուղղությամբ:

7) Երկրորդային պատժամիջոցների տակ գտնվող երկրների քաղաքացիներին պրոդուկտներ/ծառայություններ մատուցելիս Ընկերությունը հավաստիանաում է, որ առկա չէ պատժամիջոցների խախտում կամ շրջանցում՝ հավաքագրելով վերջիններիս ռեզիդենտությունը, կենսական շահերի կենտրոնը և միջոցների գոյացման աղբյուրը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև բացահայտել ՀՀ-ում տնտեսական շահը:

8) Նշված հաճախորդների նկատմամբ ի թիվս Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ներքին իրավական ակտերով սահմանվող

[1] Խորհրդի/վարչության/գործադիր մարմնի անդամներ:

պատշաճ ուսումնասիրության պահանջների, կիրառվում է նաև պատժամիջոցների համապատասխանության շարունակական մոնիթորինգ, պատշաճ ուսումնասիրության իրականացում, գործարար հարաբերության ընթացքում պատժամիջոցների շրջանցման ռիսկեր հայտանբերելու դեպքում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ այդ հաճախորդների հետ գործարար հարաբերությունները դադարեցնելու ուղղությամբ:

3.2. Ընկերության կողմից սույն Քաղաքականությամբ սահմանված սահմանափակող միջոցառումների իրականացման կարգը սահմանվում է Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի» ոլորտը կարգավորող Ընկերության այլ ներքին իրավական ակտերով:

4. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Ընկերությունը ունի պատժամիջոցների համապատասխանության համակարգ, որը կազմված է՝

1) Բաժնետերերի ժողովից, որը վերահսկողություն է սահմանում պատժամիջոցների համապատասխանության համակարգի արդյունավետության նկատմամբ:
2) Ընկերության Գործադիր տնօրենից, որն պատասխանատու է Բաժնետերերի ժողովի կողմից սահմանված պատժամիջոցների համապատասխանության համակարգի իրագործման համար:
3) Ներքին դիտարկումների մարմնից՝ պատժամիջոցների կանոնների և պահանջների և դրանց համապատասխանության մասով բավականաչափ գիտելիքներով օժտված և փորձառու անձնակազմով, ովքեր Ընկերությունում տարածում են պատժամիջոցների համապատասխանության մշակույթը և ապահովում դրա կանխարգելումը:
4) Ներքին դիտակումների մարմնի ղեկավարից, որը իրականացնում է պատժամիջոցների համապատասխանության համակարգի նկատմամբ ընթացիկ հսկողություն՝ Ներքին դիտակումների մարմնի աշխատակիցների կողմից ստացվող պարբերական տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա:
Ներքին դիտակումների մարմնի ղեկավարի հաստիքի թափուր լինելու դեպքում, վերջինիս պատասխանատվությունը ստանձնում է ՆԴՄ առավել փորձառու աշխատակիցը:
5) Ընկերության պատժամիջոցների համապատասխանության քաղաքականության իրականացման համար պատասխանատու աշխատակիցներից, որոնց դերերը և պարտականությունները հստակ սահմանված են Ընկերության ներքին իրավական ակտերով:
6) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունից, որը սահմանում է Ընկերության՝ պատժամիջոցների համապատասխանության ռիսկի ախորժակը հաճախորդներին սպասարկման ընդունելու գործընթացի նկատմամբ, մասնավորապես՝ հաճախորդների նույնականացման, պատշաճ ուսումնասիրության և բարձր ռիսկային հաճախորդների նկատմամբ շարունակական մոնիտորինգի կիրառման մասով: Նշված քաղաքականությունը սահմանում է նաև բարձր ռիսկային գործարքները հայտնաբերելու, բլոկավորելու և մերժելու գործընթացները:
7) Ծրագրային համակարգից՝ հաճախորդներին սպասարկման ընդունելու շջանակներում:
8) Հսկողական մեխանիզմներից, որոնք կազմված են երեք մակարդակներից՝
   - Առաջնային օղակի աշխատակիցներ, ովքեր իրականացնում են առաջին կոնտակտը հաճախորդի հետ և հետգործառնական բաժին, ովքեր մշակում են գործարքները,
   - Ներքին դիտարկումների մարմին, որն իրականացնում է պատժամիջոցների համապատասխանության պահանջների պահպանման մասով սույն Քաղաքականությամբ սահմանված գործառույթները,
   - Ներքին աուդիտի ստորաբաժանում, որն իրականացնում է պատժամիջոցների համապատասխանության համակարգի արդյունավետության հսկողություն:
9) Ներքին դիտարկումների մարմինը ցուցաբերում է դինամիկ մոտեցում պատժամիջոցների

ծրագրի նկատմամբ՝ մշտապես փոփոխվող ցանկերը դիտանցելու և նոր պահանջներին անմիջապես և արդյունավետորեն համապատասխանելու համար:

10) Ցանկացած թերություն կամ շեղում հայտնաբերելու դեպքում, որը կարող է վտանգի տակ դնել Ընկերության պատժամիջոցների ծրագրի համապատասխանությունը, ՆԴՄ-ն անմիջապես տեղեկացնում է Ընկերության տնօրինությանը, իսկ էական թերությունների/ռիկերի դեպքում տեղեկացնում է նաև Բաժնետերերի ժողովին:

11) Պատժամիջոցների համապատասխանության ծրագիրը ենթակա է ստուգման Ներքին աուդիտի կողմից, որը ներկայացվում է Բաժնետերերի ժողովի քննարկմանը: Ընկերությունը պետք է օգտագործի աուդիտորական ստուգումների արդյունքները՝ ընթացակարգերի կամ գործարար գործընթացների թերությունները շտկելու և վերահսկողությունն ուժեղացնելու համար:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍՔՐԻՆԻՆԳ

5.1. Ընկերությունը պետք է ունենա հաճախորդների նույնականացման պատշաճ քաղաքականություն և ընթացակարգ, համաձայն որի հաճախորդի առաջնային ստուգումն իրականացվում է գործարար հարաբերություն հաստատելու պահին: Ընդ որում, KYC գործընթացը պետք է մշակվի այնպես, որ նույնականացվեն նաև իրավաբանական անձանց մասնակիցները, իրական շահառուները, լիազոր անձինք կամ գործարքում ներգրավված ցանկացած երրորդ անձ, ինչպես նաև սահմանված հաճախականությամբ թարմացվեն հաճախորդների տվյալները: Այս գործընթացը կանխարգելիչ միջոցառում է և նվազեցնում է պատժամիջոցների խախտման հավանականությունը:

5.2. Արժեթղթերի առքուվաճառքի գործարքները ևս ենթակա են ստուգման՝ առնվազն թողարկողի և գործարքում ներգրավված կողմերի մասով, այդ թվում նաև գործարքի շղթայում ներգրավված ֆինանսական հաստատությունները:

6. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

6.1 Ներքին դիտարկումների մարմինը պատժամիջոցների համապատասխանության թեմայով անձնակազմի համար իրականացնում է ուսուցում առնվազն տարեկան մեկ անգամ կամ ըստ պահանջի՝ պատժամիջոցների նոր փաթեթների հրապարակման և ոլորտում էական փոփոխությունների ի հայտ գալու պարագայում, որոնք անմիջականորեն ազդում են Ընկերության պատժամիջոցների ծրագրի և ռիսկի ախորժակի վրա: Տվյալ դեպքում ՆԴՄ-ն աշխատակիցներին և ղեկավարներին ծանուցում է փոփոխությունը հայտնաբերելուց անմիջապես հետո:

6.2 Նոր ընդունված աշխատակիցների համար ուսուցումն իրականացվում է աշխատանքի ընդունման պահից սկսած երեք ամսվա ընթացքում: Ուսուցման թեմաները և մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը փաստաթղթավորվում և պահպանվում է օրենքով սահմանված կարգով:

6.3 Ներքին դիտարկումների մարմինը ևս պետք է մասնակցի սեմինարների և վերապատրաստումների՝ զարգացնելու և բարելավելու ոլորտին առնչվող գիտելիքներն ու փորձը, ինչպես նաև տեղեկացված լինելու կիրառվող միջազգային ստանդարտներից և զարգացումներից:

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Պատժամիջոցների համապատասխանության ծրագրի պահանջների պահպանման վերահսկողության մասով պատասխանատվություն է կրում Ներքին դիտարկումների մարմինը:

7.2 Գործընթացում ներգրավված յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում սույն Քաղաքականության գործողությունների պահպանման և կատարման համար՝ սույն Քաղաքականության սահմանված իրենց գործառույթների շրջանակներում:
7.3 Ընկերության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների կողմից սույն քաղաքականությամբ սահմանված պահաջների խախտումներ թույլ տալու դեպքում, Գործադիր տնօրենը նրանց նկատմամբ կարող է կիրառել ՀՀ օրենսդրությամբ և/կամ ներքին իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
7.4 Սույն Քաղաքականությամբ սահմանվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի ստորաբաժանումը:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Քաղաքականության տիրապետող է հանդիսանում Ընկերության Ներքին դիտարկումների մարմինը:
8.2. Պատժամիջոցների ծրագրերում/փաթեթներում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու դեպքում Ընկերությունն առաջնորդվում է այդ փոփոխություններով և (կամ) լրացումներով՝ մինչև քաղաքականությունը նոր պահանջներին համապատասխանեցնելը:
8.3. Քաղաքականությունն հաստատվում է Բաժնետերերի ժողովի կողմից, և հաստատմանը հաջորդող մեկշաբաթյա ժամկետում հրապարակվում է ընկերության պաշտոնական կայքէջում :
8.4. Քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկ կարող է ներկայացվել Ներքին դիտարկումների մարմնի կամ համապատասխան պատասխանատու ստորաբաժանումների կողմից: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում միայն Բաժնետերերի ժողովի հաստատումից հետո և հաստատմանը հաջորդող մեկշաբաթյա ժամկետում հրապարակվում է ընկերության պաշտոնական կայքէջում՝ նոր խմբագրությամբ:
8.5. Քաղաքականության հաստատմանը հաջորդող մեկշաբաթյա ժամկետում այն CBANet համակարգով ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ: